ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորանքի խոսքը Թատրոնի միջազգային օրվա առթիվ

27.03.2024

Հարգելի հայրենակիցներ,
Այսօր նշվում է թատրոնի միջազգային օրը, ինչը լավագույն առիթ է՝ հիշելու աշխարհով մեկ ճանաչում գտած թատերագիրներին ու թատերական արվեստի ներկայացուցիչներին, ոգևորվելու մարդասիրական գաղափարներով, գեղեցիկի ու վեհի զգացումով:
Թատերական արվեստը հայ իրականության մեջ սկիզբ է առել հազարամյակների խորքից և այսօր էլ մնում է մեր նախասիրություններից ու առօրյայից անբաժան:
Իսկ Գավառի պետթատրոնի ավելի քան մեկուկեսդարյա գոյությունը մեզանում ավելի հարգի է դարձնում արվեստի այս կարևորագույն ճյուղը:
Ավելորդ չէ նշել, որ այստեղ հանդիսատեսին իրենց բարձրարվեստ խաղով հիացրել են հայ բեմի հանրաճանաչ դերասանները, և մեր ջանքերն այժմ ուղղված են նրան, որ այդ ավանդույթը մնա շարունակական, ինչի վկայությունը մեր նախաձեռնությամբ հաճախակի կազմակերպվող հյուրախաղերն են՝ մայրաքաղաքի հանրահայտ թատրոնների մասնակցությամբ:
Առանձնակի ցանկանում եմ շնորհավորանքներս ուղղել Գավառի պետթատրոնի տնօրինությանն ու դերասաններին, ցանկանալ նրանց ստեղծագործական անսպառ եռանդ ու արգասաբեր թատերաշրջաններ:
Ջերմ շնորհավորանքներ եմ հղում նաև թատերասեր հասարակությանը, մեր հանդիսատեսներին, մաղթում խաղաղություն, քաջառողջություն, ամենայն բարիք, թատերական աշխույժ միջավայր:
Լավագույն ցանկություններով ՝
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան